

ԿԱՐԵԼԻ Է ՊԱՐՏՎԵԼ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ, ԲԱՅՑ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ Է ՊԱՐՏՎԵԼ ՈՐՊԵՍ ԱԶԳ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Posted on November 17, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



Յարգելի Նախագահ Արմեն Սարգսյանի պաշտոնը կը

**հրատարակենք իր ուղերձը վերապահութամբ: Փոխանակ
հանդարտեցնելու բորբոքուած իրավիճակը՝ ան հասարակութեան
որոշ խաւի մը նկատմամբ կը ցուցաբերէ կողմնակալ կեցուածք: Եթէ
ոչ օրինական՝ գէթ բարոյական խախտում է կատարուածը (unethical): կը
խօսուի սփիւռքահայութեան մասին. նախագահը կրնա՞յ պարզել թէ
որոնց հետ խորհրդակցած է: Օրինակ՝ արդեօ՞ք ան կարծիքը շօշափեց
հասկնալի պատճառներով հայրենիքէն հեռացած բազմահազար
հայրենակիցներուն, որոնք օրինապէս կը շարունակեն մնալ
Հայաստանի քաղաքացիներ: Մեր տեղեկութեամբ ոչ մէկ նման
նախաձեռնութիւն տեղի ունեցած է, չհաշուենք նաեւ բոլոր այն
կազմակերպութիւնները որոնք նախկին փտած իրաւակարգը կը
քննադատէին: Խմբ.**

Սիրելի հայրենակիցներ Հայաստանում, Արցախում և Սփյուռքում,

<https://youtu.be/-oOCDH6gMNs>

Աշխարհասփյուռ հայութիւնը ներկայումս ապրում է մեր ազգի հազարամյա
պատմութեան ամենաշրջադարձային պահերից մէկը:

Այն նպատակները, որոնց ազգովի ձգտում էինք մայր հայրենիքի բաղձալի
անկախացումից հետո, սասանված են:

Մենք պարտվեցինք մեզ պարտադրված պատերազմում՝ ինչպէս ռազմի դաշտում,
այնպէս էլ դիվանագիտական և միջազգային հանրային հարթակներում:

Կրկին ցավակցում եմ զոհվածների ընտանիքներին ու հարազատներին, իսկ
վիրավորներին մաղթում եմ շուտափոյթ ապաքինում:

Մենք զավակներն ենք Յեղասպանութիւնը վերապրած և հաղթահարած ժողովրդի:

Կարելի է պարտվել ճակատամարտը, բայց անթույլատրելի է պարտվել որպէս ազգ:

Սեփական ձեռքերով վառած տունը և կորցրած հայրենիքը կարելի է վերականգնել
միայն մի ձևով՝ վերագտնելով մեր հաղթանակը և կառուցելով այն պետութիւնը, որով
բոլորս իրապէս հպարտ կլինենք:

Եվ մենք դա վստահաբար կարող ենք անել՝ սթափ գնահատելով իրավիճակը, դասեր
քաղելով թույլ տրված սխալներից և համախմբված լծվելով ազգային վերածնունդին:

Ինչպիսին էլ լինեն անցյալի վերաբերյալ մեր գնահատականների տարբերութիւնները,
ակնհայտ է, որ հայտնվել ենք աննախադեպ խնդիրների առջև:

Ունե՞նք այնչափ կոտորած հասարակություն:

Վերադարձնելով տնտեսությունը ծանրաբեռնված է սոցիալական վիթխարի խնդիրներով:

Արցախից Հայաստան տեղափոխվածների մեծ հոսքի արդյունքում առկա է մարդասիրական աղետ:

Չափազանց բարդ է նաև համաճարակով պայմանավորված իրավիճակը:

Ի վերջո, խոցված է հայի ոգին՝ աշխարհի ցանկացած անկյունում:

Մեր երկիրն այսօր այլևս այն երկիրը չէ, որն ունեինք սեպտեմբերի 26-ին, և նույնիսկ այն չէ, ինչ ունեինք նոյեմբերի 8-ին:

Մենք չենք կարող անտեսել այս իրականությունը և շարունակել ապրել սովորական կյանքով:

Վերջին մի քանի օրերի ընթացքում, պահի հրամայականին համահունչ, քաղաքական խորհրդակցություններ և մի քանի տասնյակ հանդիպումներ են անցկացրել խորհրդարանական և արտախորհրդարանական ուժերի, հասարակական տարբեր կազմակերպությունների ու անհատների հետ: Հեռախոսագրույցներ են ունեցել Սփյուռքի տարբեր կառույցների և մեր հայրենակիցների հետ:

Հանդիպման մասնակիցների բացարձակ մեծամասնությունը համակարծիք են մեկ հարցում՝ Սահմանադրությանը համապատասխան վարչապետի հրաժարական կամ պաշտոնավարման դադարեցում և արտահերթ խորհրդարանական ընտրություններ:

Այնպես է, որ չնայած պատերազմի դադարեցմանը, Արցախի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետությունը և ողջ հայ ժողովուրդը թևակոխում են նոր փորձությունների շրջան, որում յուրաքանչյուր սխալ կարող է աղետալի հետևանքներ ունենալ:

Ստեղծված իրավիճակում հայ ժողովրդի համար այլընտրանք չկա, քան լինել միասնական և համախմբված:

Այս օրերին մեզանից յուրաքանչյուրը, հատկապես քաղաքական գործիչները և պետական պաշտոնյաները պետք է դրսևորեն բարձր պատասխանատվություն և զսպվածություն՝ ջանքերը կենտրոնացնելով բացառապես ստեղծված ճգնաժամը հաղթահարելու ուղիներ փնտրելու վրա:

Այս իրավիճակում ուզում են դիմել իրավապահ մարմիններին:

Դուք այսօր շատ մեծ պատասխանատվություն ունեք՝ նախ և առաջ մեր երկրում ապահովելու կարգուկանոն, լինել ամուր, վճռական, բայց, միևնույն ժամանակ,

Որևէ շեղում, օրենքի և օրինականության որևէ խախտում, անընդունելի և աններելի է:
Կոչ եմ անում ձեզ՝ պահպանել ու պաշտպանել օրենքը և օրինականությունը:

Հանդիպումների և խորհրդակցությունների արդյունքում ձևավորված իմ
դիտարկումները հետևյալն են՝

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և այն արժանապատվորեն հաղթահարելու
հրամայականը, ականջալուր լինելով հանրային պահանջին, ակնհայտ է, որ երկիրը
ցնցումներից զերծ պահելու համար ի վերջո անխուսափելի են լինելու Ազգային ժողովի
արտահերթ ընտրությունները:

Այս համատեքստում, իմ կարծիքով, միակ պատասխանատու մոտեցումը կարող է լինել
կառավարության և իշխող քաղաքական ուժի կողմից սեփական ներուժի օբյեկտիվ
գնահատելը և սեղմ ժամկետում ճանապարհային քարտեզ ներկայացնելը, որով
կնախատեսվեն համապատասխան սահմանադրական գործընթացների
նախաձեռնման ժամկետները, որոնց արդյունքում հնարավոր կդառնա իրականացնել
Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ, իսկ մինչ այդ կառավարումը կհանձնվի
բարձր որակավորում ունեցող Ազգային համաձայնության կառավարությանը:

Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության ու աշխարհի տարբեր
երկրներում բնակվող ողջ հայ ժողովրդի համար այս դժվարին օրերին ճգնաժամը
հաղթահարելուն ուղղված իմ վերոնշյալ դիտարկումները բխում են բացառապես
համապետական և համազգային շահերից:

Հուսով եմ, որ քաղաքական բոլոր ուժերը կգիտակցեն պահի պատասխանատվությունը
և արժանապատվորեն կիրականացնեն պատմական առաքելության իրենց մասը:

Ուզում եմ հիշեցնել, որ այսօր Հայաստանին հետևում են բոլորը՝ թե՛ մեր բարեկամները,
և՛ թե՛ մեր թշնամիները:

Մենք ուրիշ պարտականություն չունենք, բացի մեր երկիրը հզորացնելը:

Մենք ուրիշ ճանապարհ չունենք, բացի ժողովրդին համախմբելը՝ տուրք չտալով
հասարակության պառակտման վտանգ պարունակող որևէ խոսքի և քայլի:

Միայն միասնականությամբ մենք կկարողանանք պարտության բեռի տակ ճկված
վիճակից ուղղել մեր մեջքը, և թե՛ մեզ, թե՛ ապագա սերունդներին ու համաշխարհային
հանրությանը ներկայանալ որպես զավակներն այն ժողովրդի, որին հաղթելն անհնարին
է:

Վստահ եմ, որ հայ ժողովուրդը պատվով և հաղթական դուրս կգա ստեղծված դժվարին
իրավիճակից:

Keghart

Dr. Dikran Abrahamian's non-partisan website devoted to
community activities, human rights and democracy

Կարելի է պարտվել ճակատամարտը, բայց
անթույլատրելի է պարտվել որպես ազգ. Հայաստանի
Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի
ուղերձը

<https://keghart.org/president-sargsyan-speech/>

Comments



Armen Baghdoyan – 2020-11-24 23:21:44

I believe the message of the president to all Armenians should be taken with the utmost respect. We should read it twice, read it three times before we make any critical comments. Prudence and vision for the future are of the order. We should also refrain from teaching a superpower that saved us from utter destruction and irrecoverable humiliation, on how to conduct its foreign policy and pursue its own interests. It so happens that at the helm of our friend the superpower stands one of the wisest leaders ever to grace a country.



Lusine Nalbandyan – 2020-11-20 14:37:24

Mr. President: Recognition of Artsakh with its September 26th borders, i.e. before the Azeri/Turkish/ Terrorist aggression.....It is the ONLY priority of TODAY....everything else can be done tomorrow..... Please convince Russian officials that this is beneficial for them too.



Mariette Avanesian – 2020-11-20 09:35:40

I don't think these are his words. It looks more like he is reading a text given to him.